ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

« 21 » օգոստոս 2018 թ No 2149 - Ա

ՄԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՀՎԱՆ, ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԾԱՆՐ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇՏԱՊ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, մայրական և մանկական հիվանդացության և մահացության դեպքերի նվազեցման, մանկաբարձական կրիտիկական իրավիճակների և մահվան դեպքերի վարման գործընթացի գնահատման, պատճառների վերհանման և հետագա կանխարգելման միջոցառումների իրականացման նպատակով,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել.

1) մայրական և մինչև 5 տարեկան երեխաների մահվան, մանկաբարձական ծանր («կրիտիկական») դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման կարգը, համաձայն հավելված 1-ի,

2) մայրական և մինչև 5 տարեկան երեխաների մահվան, մանկաբարձական ծանր («կրիտիկական») դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման ձևանմուշները, համաձայն հավելված 2, 3 և 4-ի:

2. Ծննդօգնության ծառայություններ և երեխաների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ղեկավարներին առաջարկել.

1) մայրական և մինչև 5 տարեկան երեխաների մահվան, ինչպես նաև մանկաբարձական ծանր («կրիտիկական») դեպքերի մասին էլեկտրոնային փոստով շտապ տեղեկատվության հաղորդել առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչություն՝ mch@moh.am հասցեով:

2) տեղեկատվության հաղորդումը իրականացնել սույն հրամանի հավելված 1-ով սահմանված ընթացակարգով՝ 2-4 հավելվածներով հաստատված ձևաթղթերին համապատասխան:

3) Տեղեկատվության հաղորդման գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով բուժհաստատությունում նշանակել պատասխանատու անձ, որի անհատական տվյալները (ԱԱՀ, պաշտոն, հեռախոսի համար, էլ. հասցե) նախարարություն ուղարկել մեկ շաբաթյա ժամկետում:

3. Առողջապահության նախարարության աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ Կարինե Սարիբեկյանին.

մայրական և մինչև 5 տարեկան երեխաների մահվան, մանկաբարձական ծանր («կրիտիկական») դեպքերի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը ամփոփել և օրեկան կտրվածքով ներկայացնել առողջապահության նախարարին ու նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված 1
Առողջապահության նախարարի
2018 թվականի օգոստոսի 21 - ի N 2149 - Ա հրամանի

Կարգ

մայրական և մինչև 5 տարեկան երեխաների մահվան, մանկաբարձական ծանր («կրիտիկական») դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման

1. Ծննդօգնության ծառայություններ մատուցող և երեխաների բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հիվանդանոցային և ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունները մայրական և մինչև 5 տարեկան երեխաների մահվան յուրաքանչյուր դեպքի, ինչպես նաև մանկաբարձական ծանր («կրիտիկական») դեպքերի վերաբերյալ շտապ տեղեկատվություն են հաղորդում առողջապահության նախարարության աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման վարչություն՝ mch@moh.am հասցեով (կոնտակտ անձ՝ վարչության առաջատար մասնագետ Մերի Կատվալյան, հեռախոսի համար՝ 060808003-1313);

2. Տեղեկատվությունը հաղորդվում է դեպքն արձանագրելուն հաջորդող 2 ժամերի ընթացքում, իսկ ոչ աշխատանքային ժամերի և/կամ օրերի ընթացքում, հաջորդող աշխատանքային օրը՝ մինչև առավոտյան ժամը 11:00;

3. Տեղեկատվությունը օրեկան կտրվածքով ամփոփվում և ներկայացվում է նախարարին և մոր ու մանկան ոլորտը համակարգող փոխնախարարին;

4. Մոր և մանկան վարչության համապատասխան ստորաբաժանումները՝ մայրական և վերարտադրողական առողջության պահպանման և երեխաների առողջության պահպանման բաժինների ղեկավարները, յուրաքանչյուրն իր մասով պարբերաբար իրականացնում է դեպքերի ամփոփ վերլուծություն և ներկայացնում առաջարկություններ առանձին դեպքերի վարման գործընթացի մասնագիտական գնահատման նպատակով ծառայողական ուսումնասիրություն իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հավելված 2
Առողջապահության նախարարի
2018 թվականի -ի N -Ա հրամանի

Ձևանմուշ N1

բժշկական կազմակերպության անվանումը)

հաղորդման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, ժամը

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՄԱՅՐԱԿԱՆ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ
(**կնոջ մահը հղիության, ծննդաբերության և հետծննդյան** 42 **օրվա ընթացքում**)

N	**Մահացած հղիի/ծննդաբերի/ծննդկանի անունը. ազգանունը, հայրանունը**	**Մահացած կնոջ ծննդյան տարեթիվը, ամիսը, օրը**	**Ընդունվել է (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը)**	**Մահացել է (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը)**	**Ախտորոշումը**	**Քննչական վարույթի հարուցում**	**Հարազատների դիմում-բողոք**
						Այո/ոչ	**Այո/ոչ**

Տեղեկատվությունը հաղորդողի ԱԱՀ, պաշտոնը՝

Հավելված 3
Առողջապահության նախարարի
2018 թվականի -ի N -Ա հրամանի

Ձևանմուշ N2

(բժշկական կազմակերպության անվանումը)

հաղորդման ամիս, ամսաթիվ, տարեթիվ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԾԱՆՐ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ /ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ

N	**Հղիի/ծննդաբերի/ծննդկանի անունը, ազգանունը, հայրանունը**	**Կնոջ ծննդյան տարեթիվը, ամիսը, օրը,**	**Ընդունվել է (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը)**	**Ընդունվել է ծանր կամ դեպքը դարձել է կրիտիկական (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը)**	**Ախտորոշումը**

Տեղեկատվությունը հաղորդողի ԱԱՀ, պաշտոնը՝

Հավելված 4
Առողջապահության նախարարի
2018 թվականի -ի N -Ա հրամանի
Ձևանմուշ N3

բժշկական կազմակերպության անվանումը)

հաղորդման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, ժամը

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
0-5 **ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ**

N	**Մահացած երեխայի անունը, ազգանունը, հայրանունը**	**Երեխայի ծնվել է (տարեթիվը, ամիսը, օրը)**	**Երեխայի մահացել է (տարեթիվը, ամիսը, օրը, ժամը)**	**Մահացել է**		**Ախտորոշումը**	**Քննչական վարույթի հարուցում**	**Հարա-զատ ների դիմում-բողոք**
				Տանը	**Հիվանդանո-ցում (նշել ընդունման տարեթիվը, ամիսը, օրը, ժամը)**		**Այո/ոչ**	**Այո/ոչ**

Տեղեկատվությունը հաղորդողի ԱԱՀ, պաշտոնը՝